ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅ
ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵ

2017 թվականից ի վեր Հայաստանի համայնքների միությունը գործընկեր կառույցների հետ համատեղ կազմակերպում է տեղական ժողովրդավարության հիմնահարցերի վերաբերյալ ամենամյա համաժողովներ:

Համաժողովների նպատակն է տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկում ծավալել Հայաստանում տեղական ինքնակառավարման և տեղական ժողովրդավարության արդի հիմնախնդիրների շուրջ՝ յուրաքանչյուր տարի կենտրոնանալով տեղական ինքնակառավարման ոլորտի որևէ կոնկրետ թեմայի վրա:

«Հայացք ապագային. ապակենտրոնացման նոր օրակարգ» խորագրով Տեղական ժողովրդավարության առաջին համաժողովը տեղի է ունեցել 2017 թվականի նոյեմբերի 10-ին՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման օրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հետ գործընկերությամբ: Համաժողովի քննարկման առարկան էին տեղական իշխանությունների լիազորությունների և ֆինանսական ապակենտրոնացման հարցերը: Համաժողովին մասնակցել է նաև ԵԽ Կոնգրեսի նախագահ Գուդրուն Մոսլեր-Թորնսթրոմը:

«Վարչակենտրոնացում և տեղական տնտեսական զարգացում» խորագրով տեղական ժողովրդավարության երկրորդ համաժողովը տեղի է ունեցել 2018 թվականի նոյեմբերի 12-ին՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Եվրոպական Միության Արևելյան գործընկերության տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնֆերանսի և ԵԽ Կոնգրեսի հետ գործընկերությամբ: Համաժողովի քննարկման առարկան էին տեղական տնտեսական զարգացման վերաբերյալ միջազգային քաղաքականությունների ու ռազմավարությունների տեղայնացման հիմնահարցերը, ինչպես նաև Հայաստանի, ԵՄ Արևելյան գործընկերության անդամ պետությունների և եվրոպական այլ երկրների տեղական և տարածքային իշխանությունների կողմից իրականացված տեղական տնտեսական զարգացման հաջողված նախաձեռնությունները:

Տեղական ժողովրդավարության ամենամյա համաժողովներն անցկացվել են Եվրոպայի խորհրդի ու Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ